ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան
1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 236
01 նոյեմբեր 2019թ.

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 29ի թիվ 48-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 48-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վարուժան Շալիկոյի Քոչարյանի (ծնված՝1966 թվականի հունիսի 24-ին) դիմումը,որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր 07-041-009-040) 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և որակավորված անձի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է,որ Վարուժան Շալիկոյի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 122.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տուն և 58.7 քմ արտաքին մակերեսով նկուղ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11;13; և 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն,որ Վարուժան Շալիկոյի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքի 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

որոշում եմ

1. Քաղաքացի Վարուժան Շալիկոյի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքի 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 1 հասցեում ինքնակամ կառուցված բնակելի տունը 122.1 քմ արտաքին մակերեսով և նկուղը 58.7 քմ արտաքին մակերեսով համարել օրինական:
2. Սահմանել,որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հացավան համայնքի բյուջեի N 900105220215 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանարապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 155.488 (հարյուր հիսուն հինգ հազար չորս հայրուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

3. Սահմանել,որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չկատարելու դեպքում նշված,ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման,իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վարուժան Շալիկոյի Քոչարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 29
գ.Հացավան